ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՆԷՔՍՊՐՏ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք. ՎԱՆԱՁՈՐ
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 77/13

ՀԵՌ. (094) 89 09 14
E-MAIL shinexprt@yandex.ru

ООО "ШИНЭКСПРТ"
РА, ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ, Г. ВАНАДЗОР, ПР. ТИГРАН МЕЦ 77/13

"SHINEXPRT" LLC
77/13 TIGRAN METS AVE., VANADZOR, LORI REGION, RA

«18 » Օգոստոսի 2017թ. No ՆՓ 17-013/1

Պետ. լիցենզիա No 14699

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտե
աշխատակազմի ղեկավար՝ պարոն Խ. Մկրտչյանին

Նախագծող՝ «Գոռտեխպրոյեկտ» ՍՊԸ
Տնօրեն՝ տիկին Լ. Պողոսովային

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքներ, բարեկարգում և ցանկապատում աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն

Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքներ, բարեկարգում և ցանկապատում աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 46677.25 հազ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

( փորձաքննության եզրակացության առդիր 2 էջ):

«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Մրաքեյան

Նախագծման հիմք են ծառայել`

- Նախագծման առաջադրանք .
- Տեխնիկական պայմաններ
- Սեփականության վկայական

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 1 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական, ինժեներական մաս

Գիրք 2 - Նախահաշիվ

__Ճարտարպետաշինարարական, ինժեներական մաս__

ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքներ, բարեկարգում և ցանկապատում նախագիծը կատարված ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքների, սեփականության վկայականի հիման վրա :

Սեյսմիկ գոտի 2-րդ

Նախատեսված է կառուցել ֆուտբոլի դաշտ 90*60 մ չափերով ,ցանկապատ 1.5- 9.0մ բարձրությամբ, տրիբունա 100 նստատեղով և 11.5 x 4.50մ առանցքային չափերով մեկ հարկանի հանդերձարան:

Կառույցը նախագծված է կոշտ կոնստրուկտիվ սխեմայով: Շենքի կրող կոնստրուկցիաներ են հանդիսանում պատերը`բլոկներ 20սմհաստ. B15 դասիթեթև բետոնից, ամրանավորված վերտիկալ և հորիզոնական ուղղություններով և ե/բ միջուկներով B15 բետոնից:

Հիմքերը - ժապավենային` B7.5 դասի բետոնից:

Պատերը -բլոկներ 20սմհաստ.B15 դասի թեթև բետոնից, ամրանավորված վերտիկալ և հորիզոնական:

Ծածկը - փայտե: Տանիքը - միալանջ,փայտե կավարամածի և փայտե հիմնակմախքի վրա վրաքաշ ձևավոր ցինկապատ թիթեղից, ազատ ջրահեռացումով:

Փայտանյութը մշակել հակահրդեհային և հականեխիչ նյութերով:

Հատակներ - պրեսգրանիտ և խեցեսալիկներ:

Դռներ.պատուհաններ - մետաղապլաստե, ˝Եվրոպական˝տիպի:

Ներքին հարդարում - սվաղ - գաջով, ներկում - լատեքսով, սվաղ - ց/ա շաղախով, երեսապատում - հախճապակով:

__Նախահաշիվ__

Ներկայացված ամփոփ նախահաշվային արժեքը կազմել է 46872.64 հազ.դրամ, ներառյալ ԱԱՀ 20%: Նախահաշվային փաստաթղթերը կազմված են համաձայն գործող կարգի, Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված շինարարական նորմերի արժեքի հաշվարկման կարգի: Անցումային գործակիցները`

- աշխ. ծախսերի համար 1886.12
- մեքենաների շահագործման համար 2647.76

Նյութերի արժեքը ընդունված է համաձայն ինֆորմացիոն տեղեկագրի (N 6 2017թ.), մշակված «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և շուկայի:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը **«Շինէքսպրտ» ՍՊԸ-ի** **<u>փորձաքննությունը</u>** նշում է , որ`

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մաը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան
3. Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 29.11.2006 N 273-Ն հրամանով ամրագրված պահանջներին
4. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Շինէքսպրտ»** ՍՊԸ-ի փորձաքննությունը <u>ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է</u>, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և <u>ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:</u>

Գլխավոր ինժեներ` Ս. Աբովյան

Փորձագետ` Ա. Ղուլյան

Փորձագետ` Է. Ղարաջյան